Հավելված N 297
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020 թվականի հունիսի 5-ի N 253-Ա,
2021թ. ապրիլի 28-ի N 280-Ա հրամաններով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հուշարձանների վերականգնման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիր՝ 18-34.18-Մ2-4):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի Գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է հուշարձանների վերականգնման ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրերի, առանձին միջոցառումների և դրանց իրականացման ձևերի ու կարգերի մշակման աշխատանքներ.
2. Իրականացնում է ՀՀ պետական բյուջեի մշակման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման, միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագերի մշակման աշխատանքները,
3. Իրականացնում է հուշարձանների ոլորտի մասով Նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

4. իրականացնում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման նախագծային առաջադրանքների և նախագծերի համաձայնեցման գործընթացը.
5. իրականացնում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման, տեղափոխման և տարածքների բարեկարգման նախագծերի նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստում քննարկման ապահովումը.
6. իրականացնում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման նպատակով հետախուզման և պեղումների իրականացման համար կարծիքների քննարկման, թույլտվություններ տալու, դրանց գրանցման աշխատանքները.
7. իրականացնում է հուշարձանների վերականգնողական, դրանց առնչվող հետախուզման և պեղման աշխատանքների ընթացիկ ուսումնասիրությունները և, ըստ անհրաժեշտության, ձեռնարկում դրանց անվտանգության ապահովման միջոցառումներ.
8. իրականացնում է հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխության, տեղափոխման և տարածքների բարեկարգման աշխատանքներ.
9. իրականացնում է հուշարձանների վերականգնողական աշխատանքների, տարածքների հետախուզման ու պեղումների վերջնարդյունքների ուսումնասիրություն և կատարում իրականացված աշխատանքների արդյունքների և(կամ) գիտական հաշվետվության ընդունումը.
10. իրականացնում է վտանգված և վթարային վիճակում գտնվող հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աշխատանքները,
11. իրականացնում է հսկողություն հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքների շտեմարանների վարման աշխատանքների և դրանց առնչվող տեղեկատվության մատչելիությունը ապահովելու ուղղությամբ.
12. իրականացնում է հուշարձանների օգտագործման ձևի, նպատակի կամ բնույթի փոփոխման վերաբերյալ ներկայացված առաջարկությունների քննարկման և համաձայնեցման գործընթացները.
13. իրականացնում է քաղաքացիների, իրավաբանական անձանց և լրատվական միջոցների հարցումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքները.

Իրավունքները՝

- Վարչության բաժիններից և համապատասխան կազմակերպություններից ստանալ հուշարձանների պահպանության վիճակի վերաբերյալ տեղեկատվություն,
- համապատասխան կազմակերպություններից պահանջել ներկայացնել փաստաթղթեր, հիմնավորումներ և պարզաբանումներ,
- համապատասխան ստորաբաժանումներից և Բաժնից պահանջել ներկայացնել համապատասխան նախագծային փաստաթղթերը, տեղեկատվություն, պարզաբանումներ և եզրակացություններ,
- համապատասխան մարմիններից և Վարչության բաժնից կամ բաժիններից պահանջել հետախուզման և պեղման համապատասխան փաստաթղթեր՝ հայտեր,

զեկուցագրեր, եզրակացություններ և տեղեկատվություն,

- համապատասխան մարմիններից պահանջել ներկայացնել հուշարձանների վերականգնողական, հետախուզման և պեղումների վերաբերյալ պարզաբանումներ և հաշվետվություններ,
- համապատասխան մարմիններից պահանջել ներկայացնել հուշարձանների վերականգնողական, հետախուզման և պեղումների արդյունքների վերաբերյալ պարզաբանումներ և գիտական հաշվետվություններ,
- համապատասխան ստորաբաժանումներից և Բաժիններից պահանջել ամբողջական տեղեկատվություն,
- Բաժնի մասնագետներից պահանջելու ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն շտեմարանների կազմման ընթացքի վերաբերյալ,
- համապատասխան ստորաբաժանումներից պահանջելու ներկայացնել տեղեկատվություն օգտագործման հանձնման ենթակա հուշարձանների վերաբերյալ,
- համապատասխան ստորաբաժանումներից ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր և կազմակերպելու քննարկումներ,

Պարտականությունները՝

- ուսումնասիրել հուշարձանների վերականգնման ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրերը, ներկայացնել առաջարկություններ, իրականացնել հսկողություն ծրագրերի իրականացման աշխատանքների նկատմամբ,
- ուսումնասիրությունների արդյունքներով արգելել կամ դադարեցնել աշխատանոները, եթե այդ աշխատանքները վնասել կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պատմական միջավայրը.
- ուսումնասիրել պետական բյուջեի, միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագրերի, Նախարարության գործունեության տարեկան ծրագրի մշակման համար ներկայացված փաստաթղթերը,
- ուսումնասիրել ներկայացված տեղեկատվությունը, ստուգել հիմնավորումները և ներկայացնում համապատասխան մասնագիտական եզրակացություն,
- իրականացնել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում,
- ուսումնասիրել ներկայացված նախագծային առաջադրանքները և նախագծերը, ստուգել փաստաթղթակազմը, համապատասխանությունը օրենսդրության պահանջներին և ներկայացնել առաջարկություն՝ դրանց համաձայնեցման մասին.
- ներկայացնել առաջարկություն՝ նախագծերը նախարարության գիտամեթոդական խորհրդում քննարկելու վեարբերյալ,
- ուսումնասիրել ներկայացված փաստաթղթակազմը, հստակեցնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը և ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին,
- ուսումնասիրել տեղեկատվությունը և իրականացնել անվտանգությունն ապահովող միջոցառումներ,
- ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ամրակայման, նորոգման,

վերականգնման և բարեկարգման աշխատանքներն արգելելու և դադարեցնելու ուղղությամբ,

- հսկողություն իրականացնել շտեմարանների կազմման ընթացքի վրա և հետևել դրանցում ընդգրկված տվյալների մատչելիությունն ապահովելու ուղղությամբ.
- ուսումնասիրել հուշարձանների օգտագործման հանձնման վերաբերյալ իրավական ակտերը և ներկայացնել առաջարկություններ,
- սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ապահովել դիմումների և բողոքների պատասխանները, ըստ անհրաժեշտության կատարել քաղաքացիների ընդունելություն:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ և արվեստ
2	**Ոլորտ**	Ճարտարապետություն և շինարարություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ
3	**Ենթաոլորտ**	Ճարտարապետություն և քաղաքաշինություն	Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն	Պատմություն և հնագիտություն
4	**Մասնագիտություն**	Ճարտարապետություն		

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում,վերլուծություն
5. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Փաստաթղթերի նախապատրաստում
2.Բողոքների բավարարում
3.Ժամանակի կառավարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահախորդակցություն:

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատաքի կամակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և (կամ) դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: